

**ՀՐԱՎԵՐ**

**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

**«Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ վերապատրաստողների վերապատրաստում»**

**(13 համայնքներում ՈԲՓՄՀ) IRFSP/TA/CQS-2019/012**

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Ընտրություն խորհրդատուի որակավորման հիման վրա*

ԳԶՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները՝ **«Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ վերապատրաստողների վերապատրաստում» (13 համայնքներում ՈԲՓՄՀ-Ոռոգման բաշխման փոքր և միջին համակարգեր) IRFSP/TA/CQS-2019/012** ձեռք բերելու համար:

**Սույն առաջադրանքի հատուկ նպատակը**

Առաջադրանքի հատուկ նպատակը վերականգնված ոռոգման համակարգերի շահառուների շրջանում կայուն գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքների ստեղծումը կամ ամրապնդումն է՝ Վերապատրաստողների վերապատրաստում անցկացնելու միջոցով: Ակնկալվում է, որ ՎՎ-ն հաջողությամբ ավարտելուց հետո, վերապատրաստված դասընթացավարները դասընթացը կվերարտադրեն իրենց համապատասխան հաստատություններում և կազմակերպություններում համագյուղացիների և գործընկերների համար՝ ստեղծելով ձևագնդի էֆեկտ և առաջ բերելով կուտակային փոփոխություններ:

- Ելնելով վերը նշվածից՝ Ծրագիրը մտադիր է ընտրել խորհրդատու/ծառայություն մատուցող /ՕՄ/՝ 5-ամսյա ժամկետում վերոնշյալ նպատակի իրականացմանն աջակցելու, մասնավորապես՝ թիրախային շահառուների հայտնաբերման, նրանց կարիքների ուսումնասիրության, պահանջների հիման վրա ուսումնական մոդուլների հանգամանակից մշակման, շահառուների կարողությունների ստեղծման և դասընթացավարների ցանցի ստեղծման միջոցով՝ դասընթացի ազդեցության պահպանումն ապահովելու նպատակով:

**ԿԳԳ ՎՎ նպատակը, շրջանակը և մեթոդաբանական մոտեցումը**

ՕՄ-ն պետք է մշակի և անցկացնի կայուն գյուղատնտեսական գործելակերպի, համակարգերի և տեխնոլոգիաների վերաբերյալ Վերապատրաստողների վերապատրաստման (ՎՎ) դասընթաց: Դասընթացը նաև կծառայի որպես հարթակ, որը մասնակիցներին կծանոթացնի կայուն գյուղատնտեսության ոլորտում ընթացիկ գլոբալ միտումներին, և թե ինչպես կարող է ԿԳԳ գործելակերպին հետևելը անհատներին, կազմակերպություններին և համակարգերին ընձեռել կարողություններ՝ շուկայի փոփոխվող պահանջներին բավարարելու համար:

ՕՄ-ն պետք է սերտորեն համագործակցի ԾԻԳ-ի համակարգողների թիմի հետ և բոլոր համապատասխան փաստաթղթերն ու նյութերը ներկայացնի ԾԻԳ-ի համաձայնությանը և հաստատմանը:

**Ընտրության չափանիշներ:** ՎՎ արդյունավետությունն ու կայունությունն ապահովելու նպատակով ՕՄ-ն պետք է իրականացնի վերապատրաստվողների մանրակրկիտ ընտրություն՝ հիմնվելով ընտրության հետևյալ հիմնական չափանիշների վրա.

- Առնվազն 6 ամսվա ընթացքում ներգրավվածություն տեղական կառավարման կառույցների (քաղաքապետարան, գիտասփյուռ ծառայություններ և այլն), պետություն-մասնավոր հատված համագործակցության (քոլեջներ/համալսարան, մասնագիտական կրթության կենտրոններ, գիտասփյուռ ծառայության մասնավոր կենտրոններ և այլն) և դոնորների կողմից իրականացվող գյուղատնտեսական ծրագրերում և/կամ տեխնիկական խորհրդատվության և խորհրդատվական ծառայությունների տրամադրման բնագավառում,
- Մոտիվացվածություն և պատրաստակամություն մասնակցելու ՎՎ-ին և կատարելու Ծրագրի պահանջները հաճախումների և հավաստագրման վերաբերյալ:
- ՎՎ վերարտադրման ներուժ և կարողություն, հանձնառում ՎՎ ավարտից հետո իրենց համապատասխան բնագավառներում նախաձեռնել նմանատիպ վերապատրաստման դասընթաց/խորհրդատվություն:

**Աշխատանքներ**

Խորհրդատու/ծառայություն մատուցողը կարևոր դեր կխաղա Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ ՎՎ իրականացման գործում՝ բարձրացնելով կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում ԵԳՖԱԾ-ի ներդրումների արդյունավետությունը և կայունությունը՝ փոխգործակցային կապեր ստեղծելով ծրագրային աշխատանքների միջև:

Ծրագիրը վերապատրաստվողներին պետք է ընտրի ընտրության չափանիշների հիման վրա, մշակի ՎՎ ծրագիր՝ հիմնվելով վերապատրաստվողների կարիքների վրա և իրականացնի համալիր ուսուցում՝ կայուն գյուղատնտեսության վերաբերյալ վերապատրաստվողների գիտելիքներն և գործնական հմտությունները բարելավելու համար:

"Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ /ԳՏՁ ԾԻԳ/ հրավիրում է բոլոր շահագրգիռ Խորհրդատվական Կազմակերպություններին ներկայացնել Հետաքրքրության հայտեր առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով Խորհրդատուի ընտրության համար **«Կայուն գյուղատնտեսական գործելակերպի վերաբերյալ վերապատրաստողների վերապատրաստում» (ԿԳԳ ՎՎ) IRFSP/TA/CQS-2019/012** ծրագրի իրականացնելու նպատակով:

Շահագրգիռ Խորհրդատվական Կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն ցույց տալով, որ նրանք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձառություն ծառայություններն իրականացնելու համար: Խորհրդատվական Կազմակերպությունները կարող են ներկայացնեն միայն մեկ Հետաքրքրության հայտ՝ առանձին կամ Համատեղ ձեռնարկության կազմում:

Ծրագրի Առաջադրանքի պայմանները և Հետաքրքրության հայտի ներկայացման ձևանմուշը հրապարակված են <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում և պետք է ներառեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում-նամակ՝ ուղղված ԾԻԳ-ի տնօրենին;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Տեղեկատվություն Խորհրդատվական կազմակերպության ընդհանուր փորձի վերաբերյալ /տարիների քանակը/ ծրագրի շրջանակներում;
- Վերջին հինգ տարիների ընթացում կնքված նմանատիպ պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն;
- Աշխատակազմի ցանկը և դրանց աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Հետաքրքրության Հայտը համատեղ ներկայացնելու դեպքում ՀԶԳ-ի պայմանագիրը;

**Գնահատման չափանիշները հետևյալն են.**

Չափանիշը	Բալերը
Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) համապատասխան ոլորտում	40
Վերջին հինգ տարիների ընթացում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը	50
Լեզվի իմացությունը /անգլերեն/	10

Անցողիկ նվազագույն շեմը՝ 70 միավորն է:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է «ԳՁՄՀ-ի վերանայված քաղաքականությունը իր գործունեության և գործողությունների մեջ խարդախության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ»:

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն կամ էլեկտրոնային տարբերակով: Պատճենների միջև տարբերության դեպքում հիմք կընդունվի Հայտի բնօրինակը:

Ծառայությունների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 5 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է "Ընտրություն Խորհրդատուի Որակավորման հիման վրա" մրցույթային եղանակով, 2010թ. Սեպտեմբերին ԳՁՄՀ-ի կողմից հրապարակված Գնումների ուղեցույցով և Գնումների Ձեռնարկով կամ վերը նշված փաստաթղթի ցանկացած թարմացված հրապարակված տարբերակով: Լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների համար խնդրում ենք գրել [procurement@raed.am](mailto:procurement@raed.am) էլեկտրոնային հասցեին:

Պարզաբանումները պետք է ստացվեն վերջնաժամկետից առավելագույնը 7 օր առաջ, իսկ պատասխանները կհրապարակվեն առցանց՝ [www.raed.am](http://www.raed.am) կայքում: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն նշված հասցեով մինչև 2021 թ. ապրիլի 14-ը՝ ժամը 18:00-ն:

***“Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ  
Գնումների բաժնի պետ՝ Արթուր Գրիգորյան  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;  
Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 – 10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 – 58; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)***